ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 940

6 հուլիսի, 2001թ.

ԽՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում Հայաստանի Ամերիկյան Համալսարանի տնօրենությանը, դասախոսական կազմին, բարեբաներին և նախկին ու ներկա բոլոր սաներին՝ կրթօջախի հիմնադրման 10-ամյա հոբելյանի առիթով:

Արդարև, աստվածահաճո առաքելություն է կրթության և գիտության լույսի տարածումը: Հնագույն ժամանակներից ի վեր մեր ժողովուրդը կարևորել է կրթության և ուսման դերակատարությունը ազգային մեր կյանքում՝ վաղ միջնադարում արդեն ձևավորելով առաջին համալսարանները: Պատահական չէ, որ 5-րդ դարում հայոց գրերի գյուտից հետո հայերենով թարգմանված առաջին նախադասությունը եղավ Առակաց գրքի «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ իմանալ զբանս հանճարոյ» միտքը: Քաղաքական ամենադժվարին վիճակներում անգամ մեր ժողովուրդը սախանձախնդրորեն պահել է իր դպրոցները, զորացրել իմացության լույսը:

Հայաստանի Ամերիկյան Համալսարանը հիմնադրվեց Հայրենի մեր երկրի համար շրջափակման և պատերազմական ծանր ժամանակներում՝ նպատակ հետապնդելով պատրաստել երիտասարդ գիտակ մասնագետներ նորանկախ Հայաստանի տնտեսական կյանքի զորացման և զարգացման համար տարբեր բնագավառներում: Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Ամերիկյան համալսարանի շրջանավարտ մասնագետները արդյունավետորեն ծառայելով տարբեր հաստատություններում, իրենց ներդրումն են բերում Հայաստանի տնտեսության զարգացմանն ու կյանքի առաջընթացին: Հայաստանի Ամերիկյան Համալսարանի՝ մեր ժողովրդին մատուցած բարի արդյունքներից անմասն չէ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի գործունեության մեջ ներգրավված են համալսարանի շրջանավարտներ:

Աղոթում ենք ի սրտե, որ Բարձրեալն Աստված հանապազ օգնական ու աջակից լինի Հայաստանի Ամերիկյան Համալսարանի տնօրենությանը, դասախոսական կազմին, Համալսարանի գործունեությանը սատարող Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, բարեգործ հայորդիներին և բոլոր ուսանողներին նախանձախնդրորեն շարունակելու համալսարանի առաքելությունը Հայաստանի կյանքում:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ